

Համբերութեան Պսակը

Արդ , ինչո՞ւ չար բաները յիշելով կատաղածի նման կը վնասես եւ կը զրկես քեզ արքայութենէն, որուն հասնելու համար պէտք էր ամէն հնար գործարէինք: Անցաւոր այս կեանքը եթէ այսքան ցանկալի է, ինչ խօսք հապա այն կեանքի մասին, ուր ո՛չ ցաւ կայ ո՛չ տրամուլթիւն:

Երանի, եւ երիցս երանի անոնց, որոնք անոր կը հասնին: Նոյնպէս, չկայ աւելի թշուառական բիւրապատիկ խղճալի քան անոնք, որոնք կը զրկուին անկէ: Հետեւաբար, որպէսզի արքայութիւնը ժառանգենք եւ ո՛չ թէ գեհէնը, ամէն բարիք գործենք: Նախ՝ մեր ընկերոջ ներելով, ապա խոստովանութեամբ, աղօթքով եւ ողորմութեամբ ջանանք մեր անձերը սրբել մեղքերէ, որպէսզի Պօղոսի խրատին համաձայն՝ բարի գործերով կատարեալ ըլլանք:

Ան, որ մասամբ առաքինի կեանք կը վարէ, այնպիսին կատարեալ չըլլար: Ի՞նչ կը շահի մէկը յաճախակի աղօթքներէ, երբ առատ կերպով ողորմութիւն չի տար, կամ կուտայ՝ մարդոց երեւելու համար եւ կամ Աստուծոյ կամքին համաձայն ողորմութիւն կուտայ եւ անով կը հպարտանայ, կամ թէ խոնարհութիւն ցոյց կուտայ եւ պահք կը պահէ, սակայն ընչասէր կ'ըլլայ, ի՞նչ որ Քրիստոսի ծառայութենէ կը հեռացնէ մեզ, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Չէք կրնար Աստուծոյ եւ ինչքերու ծառայել», (Հմմտ. Մատթ. 2. 24), Քրիստոս կ'ըսէ. կարօտեալին տուր, իսկ ան՝ աղքատներէն խլէ: Քրիստոս կ'ըսէ. պէտք է ներել մեղաւորներուն, իսկ ան՝ պէտք է վնասել անմեղներուն: Քրիստոս կ'ըսէ ողորմած եղիր իսկ ան՝ անողորմ եղիր:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Թեմական կեանքէն ներս Առաջնորդարանը այն կառույցն է, ուր կը գտնուի առաջնորդին աշխատասենեակը պաշտօնական հիւրերը ընդունելու դահլիճը, Ազգ. վարչութեան ժողովասենեակները, եթէ հնարաւորութիւն ունի, խորհուրդներու ժողովասենեակները, քարտուղարութեան գրասենեակը, ուր միայնգամայն կը պահուին ժողովներու ատենագրութեանց տետրակները, թրդթակցութեանց պատճէնները, հաշվապահական տոմարները, թեմի եկեղեցիներու խորհրդակատարութեանց տոմարները, այլ խօսքով՝ թեմի բոլոր արխիւները:

Բայց Առաջնորդարան հասկացողութիւնը լոկ ժողովատեղի կամ արխիւատուն չէ, այլ՝ թեմական կեանքին կորիզն է ան, ընդհանուր վերահսկողը՝ թեմին կրթական բոլոր ծրագիրներուն, շրջանի հայ կեանքը իր բոլոր երեսներով առողջ պահող, ժողովուրդին բացուող, ժողովուրդին ծառայութեան կոչուած հաստատութիւնն է ան, որ իր առաքելութեամբ եւ ներհուն աշխատանքով պէտք է դառնայ ուղղութիւն տուող փարոս հայ կեանքէն ներս:

Հոգեւոր կեանքի ծաղկման, եկեղեցիներու պայծառութեան, ազգային դիմագիծի պահպանման մղիչ սատարողը պէտք է ըլլայ Ազգային Առաջնորդարանը:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak Որսագ քերթ



ԺԴ. ՏԱՐԻ

ԿՈՐԱԿԻ, 18 ԱՊՐԷԼ 2021

ԹԻԻ 16

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍՍՏՈՒԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 9.23-31: Ա. Պոտ. 2.1-10

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.23-3.12

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը մանչնար եւ պէտք չունէր ոնէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի որ ինք գիտէր՝ թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմոս անունով փարիսեցի մարդ մը կար, որ հրեայ իշխան մըն էր: Գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտեմք, որ դուն Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ՝ եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի բա՞ն է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը, ուր որ ուզէ կը փչէ: Դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտեմք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսնեմք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէ՛ք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմք»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՆԽԱՐԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԿԱՆԱԶ

Աշխարհամատուռ կը նշանակե՛ր երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Չատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատուռան կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքելներու կողմէ:

Առաքելները՝ Յիսուսի կարգադրութեան համաձայն, Իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ճաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթավայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին՝ աշխարհամատուռ, եւ անոր յիշատակին եկեղեցոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատուռան տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակետէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ:

Ան Քրիստոսի հաստատած Իտեալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնեայ աշխարհի, մանաւանդ եկեղեցոյ կրօնապետներու երազած իտեալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնեաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատուռան Կիրակին կը կոչուի նաեւ՝ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի ճշգրիտ իմաստը ծանօթ չէ մեզի:

Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ, որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը, աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհի վրայ տարածուած եկեղեցին:

Ի՞նչ կը նշանակէ Հայ եկեղեցի:

Հայ եկեղեցի կը նշանակէ եկեղեցի հայերուն, այսինքն՝ եկեղեցի մը, որ ի բնէ կը պատկանի հայ ազգին կամ հայ ժողովուրդին: Ասոր համար կ'ըսուի նաեւ Հայոց եկեղեցի:

Ի՞նչ կը նշանակէ Մայրենի եկեղեցի:

Հայ եկեղեցին հոգեւոր մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հոգեւոր գաւակն է անոր: Որովհետեւ ժողովուրդը մկրտութեամբ հոգեւորապէս կը ծնի անոր ծոցէն, անկէ կ'առնէ իր հոգեւոր սնունդը եւ կը պաշտպանուի անոր հովանիին տակ ընդդէմ իր հաւատքին, բարոյականին եւ թշնամիներուն: Այս պատճառով կ'ըսուի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻ:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՆԱՍԻՍԵՆՔ, ՅԵՏՈՅ ՎԿԱՅԵՆՔ

Սամարացի կինը լսելէ ետք Քրիստոսը, Սամարիա վազեց եւ այդտեղի բնակիչներուն ըսաւ. «Եկէ՛ք տեսէ՛ք: Մարդ մը կայ, որ իմ բոլոր ըրածներս ըսաւ ինձի: Արդ-եօք ա՞ն է Քրիստոսը» (Յե. 4.29): Եկեղեցոյ հայրերը Սամարացի այս կինը կոչած են Սամարիա քաղաքին առաջին Աւետարանիչը: Բայց այս կինը գՔրիստոս աւետելէ եւ աւետարանելէ առաջ, նախ լսեց Քրիստոսը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ա Ր

Իսուելէ ու վկայելէ առաջ Քրիստոսի մասին, նախ պետք է լսենք Քրիստոսի ձայնը, ինչպէս Սամարացի կինը ինք լսեց, եւ յետոյ միայն երթանք ուրիշներուն, պատմենք անոնց Յիսուսի սիրոյն մասին, եւ հրաւիրենք գանձը Քրիստոսի: Եթէ նախ լսենք Յիսուսը՝ յետոյ միայն խօսինք Յիսուսի մասին, վստահ եղէք, որ շատ մարդիկ պիտի կարենանք բերել Յիսուսի, ճիշդ ինչպէս Սամարացի կինը ինք բերաւ: Դժբախտութիւն է աշխատանք տանիլ մարդիկը արքայութեան դուռին մօտեցնել, երբ մենք դժոխքի դուռին քով վրան բացած ենք:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Արդարներուն լոյսը միշտ վառ կը մնայ, մինչ ամբարիշտներունը՝ պիտի մարի: Նենգամիտ մարդիկ պիտի մոլորին մեղքերուն մէջ, մինչ արդարները պիտի գթան եւ ողորմին (Առակ.13):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԵԱԿ ԻՆՉՆ Է ՃԵՄԱՐԻՑ ԳՂՇԱՍՏՈՒՆԲԸԸ Կարդա՛ր ՍՂՂՄՈՍ 15

ՏԷ՛Ր, ո՞վ արժանի պիտի ըլլայ տաճարիդ մէջ ըլլալու, ո՞վ արժանի պիտի ըլլայ սուրբ լերանդ վրայ բնակելու: Ան, որ անբիծ կեանք մը կ'ապրի արդարութիւն կը գործէ, եւ միայն ճշմարտութիւնը կը խորհի ու կը խօսի. որ չի գրպարտեր բնաւ, իր ընկերոջ չարիք չ'ընէր, եւ դրացին չի նախատեր: Ան, որ կ'արհամարիէ Աստուծմէ մերժուածները, մինչ կը պատուէ աստուածավախ մարդիկը: Ան, որ յանձն կ'առնէ իր երդումը յարգելով վնաս կրել, քան թէ իր խօսքը դրժել:

Ան որ իր դրամը տոկոսով չի տար, եւ կաշառքի փոխարէն անմեղին դէմ վկայութիւն չի տար: Այսպէս ապրողը երբեք պիտի չսասանի՝

ԱՂՈԹՔ

ՏԷ՛ր, մեղքերուս համար սգացող եւ արտասուող դարձո՛ւր գիս, որովհետեւ ծանրաբեռնուած եմ անօրէնութեամբ եւ յագեցած՝ աղտոյի խորհուրդով: Շատ ներեցիր ինձի, որովհետեւ չպատժեցիր մարմնի մէջ: Սարսելով կը դողամ, թէ [արդեօք] ինձի համար [աննեքիլի] պիտի չմնա՞ն այսպիսի չարիքները: Կ'աղաչեմ բարեբար Տէր գիս առեան մի՛ կանչեր եւ մի՛ մատնե՛ր գիս տանջանքներու, այլ՝ փրկէ՛ գեհեմի հուրէն ու ազատէ՛ վտանգներէն, ողորմէ՛ եւ ազատէ՛ վտանգներէն, ողորմէ՛ եւ ազատէ՛ գիս, որովհետեւ միայն Դ՛ուս մարդասէր ես:

Ե. Ասորի